Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Ս. Մանվելյան
07 հոկտեմբերի 2021թ.

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի 2021թվականի
07 հոկտեմբերի որոշմամբ (արձ.№41)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Հյուսիսային համալսարան>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Համալսարան) Իրավաբանական կլինիկան (այսուհետ՝ Կլինիկա) Համալսարանի իրավագիտության ֆակուլտետին կից գործող ուսումնախորհրդատվական կառուցվածքային ստորաբաժանում է, որը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում:

1.2. Կլինիկան գործում է ՀՀ օրենքների, Համալսարանի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կլինիկան իր գործունեությունն իրականացնում է օրինականության, գաղտնիության, կամավորության, հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

1.4. Կլինիկայի վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումն Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով կայացնում է Համալսարանի գիտական խորհուրդը՝ Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

2.ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1.Կլինիկայի գործունեության նպատակն է՝ ուսանողներին պրակտիկ իրավաբանին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով ապահովելը:

2.2. Կլինիկայի գործունեության խնդիրներն են՝

2.2.1. ուսանողներին իրավակիրառ պրակտիկայում ծագող իրավական խնդիրների լուծման գործընթացին ընդգրկելը,

2.2.2.իրավաբանի մասնագիտության դերն ու նշանակությունը ճիշտ պատկերացնելուն և մասնագիտական վարքագծի կատարելագործմանն օժանդակելը,

2.2.3. Համալսարանի աշխատակիցների, սովորողների և շրջանավարտների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված խորհրդատվությունների ապահովումը,

2.2.4. Համալսարանի աշխատակիցների, սովորողների և արտաքին շահակիցների իրավագիտակցության բարձրացման ապահովմանը նպաստելը,

2.2.5. ՀՀ սոցիալապես անապահով քաղաքացիներին անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման ապահովումը:

3.ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կլինիկան իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.1. կլինիկական կրթության կազմակերպում և իրականացում,

3.1.1. ուսումնական ծրագրերի հաստատում,

3.1.2. ընդունելության հարցազրույցի կազմակերպում՝ գործող ընթացակարգի համաձայն,

3.1.3. դասընթացների կազմակերպում՝ հաստատված դասացուցակին համապատասխան,

3.1.4. արդյունավետության ստուգում:

3.2. Իրավունքի բոլոր ճյուղերով անվճար իրավաբանական ծառայությունների մատուցում՝

3.2.1. իրավաբանական խորհրդատվության իրականացում,

3.2.2. իրավական վերլուծությունների իրականացում,

3.3.3. փաստաթղթերի կազմում և տրամադրում:

Իրավաբանական ծառայությունները մատուցվում են՝ հաստատված հերթապահության գրաֆիկին համապատասխան:

3.3. Համալսարանի աշխատակիցների, սովորողների և շրջանավարտների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված խորհրդատվությունների, դասընթացների կազմակերպում,

3.4.Համալսարանի աշխատակիցների, սովորողների և արտաքին շահակիցների իրավագիտակցության բարձրացման ապահովման նպատակով՝ կոնֆերանսների, դասընթացների, հանդիպումների, քննարկումների, ճանաչողական այցերի կազմակերպում,

3.5.ՀՀ պետական, ոչ պետական մարմինների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, ինչպես նաև պրակտիկ գործունեություն իրականացնող այլ անձանց հետ համագործակցություն,

3. 6. կլինիկական կրթության մաս հանդիսացող և դրա իրականացմանը նպաստող՝ այլ գործունեության և ծրագրերի իրականացում:

4.ԿԼԻՆԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1.Կլինիկայի կազմի մեջ մտնում են Կլինիկայի ղեկավարը, փաստաբան-դասախոսները, դասախոսները, սովորողները և իրավախորհրդատուները:

4.2. Կլինիկայի գործունեության կազմակերպումը և ղեկավարումն անմիջականորեն իրականացնում է Կլինիկայի ղեկավարը, որը պաշտոնում նշանակվում և պաշտոնից ազատվում է Համալսարանի ռեկտորի կողմից:

4.3.Կլինիկայի դասախոսները և փաստաբան-դասախոսները կարող են ընտրվել Համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից: Կլինիկայի դասախոսները և փաստաբան-դասախոսները մասնակցում են Կլինիկայի ընդհանուր գործունեությանը:

4.4. Կլինիկայի սովորողները և իրավախորհրդատուները.

4.4.1.Կլինիկայի սովորողները՝ Համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի երրորդ և չորրորդ կուրսերի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողներն, ովքեր հաջողությամբ

հաղթահարել են Կլինիկայի ընդունելության հարցազրույցը և կլինիկական կրթություն ստանալու իրավունք են ձեռք բերել: Կլինիկական կրթության ամբողջ ընթացքում Կլինիկայի սովորողները կարող են մասնակցել իրավաբանական ծառայությունների մատուցմանը:

4.4.2.Կլինիկայի իրավախորհրդատուները՝ կլինիկական կրթությունն անցած և իրավաբանական ծառայություն մատուցելու իրավունք ստացած սովորողներն են, որոնց Համալսարանի ռեկտորի կողմից տրվել է հավաստագիր:

4.5.Կլինիկայի ղեկավարի թույլտվությամբ Կլինիկայի աշխատանքներին կարող են ընդգրկվել նաև արտաքին շահակիցներ՝ Կլինիկայի առանձին աշխատանքներում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

5.ԿԼԻՆԻԿԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Կլինիկայի ներքին շրջանառության փաստաթղթերի ձևերը կազմվում, հաստատվում և արխիվացվում է Կլինիկայի ղեկավարի կողմից:

6. ԿԼԻՆԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6.1.Կլինիկայի գույքը ձևավորվում է Համալսարանի կողմից իրեն տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

6.2.Կլինիկայի ղեկավարը յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար Համալսարանի հաշվապահությանն է ներկայացնում Կլինիկայի աշխատակազմի ծանրաբեռնվածության փաստացի կատարողականի վերաբերյալ տեղեկություններ:

7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը՝ Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

7. 2.Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: